# ԱԴԱՄ ԳԻՐՔ.

Անցք ադամայ
նախաստեղծին.
Գործին 'ի սմա
և ցուցանին.
Այնք որք սիրով
ւ լսել կամին.
Ոգտեսցեն 'ի սմա
և շահեսցին.

A 680

# ԱԴԱՄ ԳԻՐՔ.

## ՅՈՐՈՒՄ ԲՈՎԱՆԴԱԿԻՆ.

Բանք յարմարականք և պատմութիւնք պատշաճաւորք յաղագս նախնեացն մերոց Ադամայ և Եւայի. համեմատեալ զանազան խորհրդով յադամայ 'ի քէն, և յետոյ է առ Ածածինն. 'ի դրախտէն 'ի խաչն, և 'ի յօձէն 'ի յուդա. և յառաջին արարչութէն 'ի յերկրորդ նորոգութիս. Եւ այլ ինչ բանք զանազանք, պիտանիք և հարկաւորք։

*Արարեալ Տէր Առաքել Վարդապետի բաղիշեցւոյ. և Սիւնեաց Եպիսկոպոսի. Գեղեցկայարմար ոտնաչափութեամբ.

1։ Վասն՝ վեցօրեայ արարչութեն
այ, ևկազմութեն մարդոյն։
2։ Վ՟ս գեղազարդութեան նախ
նեացն մերոց, և դրախտին։
3։ Վ՟ս պատրանաց բանսարկուին
՚ի ձեռն օձին։
4։ Վ՟ս լալոյ նախնեացն և սգոյ և
տրտմութեն նոցին։
5։ Վ՟ս աւուր հոգեվարին, և պա
տերազմի դիւացն։
6։ Վասն ահեղ դատաստանին, և
քննութեն մարդկան։
7։ Վասն զանազան տանջանացն
դժոխոց։
8։ Վասն չարին թէ ուստի եղև.
և զինչ է պատճառ նորին։
9։ Վասն բաղձալոյ բարւոյն՝ ամ
էից։
10։ Վ՟ս պատկերակցութե մարդոյն
առ ած և առ հրեշտակս։
11։ Վ՟ս հարցաքննելոյն այ զադամ


յետ

յետ յանցմանն.

12. Վասն կրկնակի խորհրդով հարցմանն այ̃ ցադամ.

13. Վասն խորհրդոյ հարցմանն այ̃ յօձն.

14. Վասն նախատելոյ զինքեանս նախաստեղծիցն.

15. Վասն զղջմամբ ողբալոյ նախամօրն եւայի.

16. Վասն կողին որ պատճառ եղեւ խաբմանն.

17. Վասն պէս պէս պակասութե̃ առնելոյ կողին.

18. Վասն որպիսութե̃ եւ արհամարհանաց կողին.

19. Վասն թէ ընդէ՞ր ՚ի հողոյ ըստեղծ ա̃ մարդն, եւ ոչ յայլ նիւթոյ.

20. Վասն տարերաց որք են մառանք արարչին.

21. Վասն համեմատութե̃ մարդոյն ընդ աստուծոյ.

22. Վասն համեմատութե̃ կողին առ



առ

առ ամենայն կոյսն։

23։ Վասն կնքելոյ գերեզմանին Քի Տեառն մերոյ։

24։ Վն համեմատութեն նախկին արարչութեանն երկրորդ նորոգութեանս։

25։ Վասն մահուան և յարութեան ՚ի մէջ համեմատութեն։

26։ Վն երկոտասան սքանչելեացն. որք եղեն յաւուր խաչելութեն Քի։

*Յորում և աւարտումն բանիս։



* Գլուխ Ա։

* Ա͞ծ արարչութեանն Ե͞ր և ստեղծման Մարդոյն. * Տունք. 29։ *

Նախ քան զեղեալքըս ա͞մ.
երրորդութին անեղա կան.
անուր աներբ ևանսահ ման.
Նա գոյացոյց զէակս հա մայն։
Նախ յոչէից արար զ հիւ լէն.
երկրորդ ըզսեռըս համօ րէն.
երրորդ զգոյակսըն լուսե ղէն.
չորրորդ զտարերսըն հիւթե ղէն։
Երկիր անյայտէր հանպատ րաստ.
Ջուրն 'ի վերայ նորին տա պաստ.

հողմն 'ի վերայ ջըրոյն ընդ գաստ·
հուրըն հողմոյն կայր առա գաստ:
Վերացուցեալ զջուրն 'ի ծօ վէն·
արար զկամարըն ջըրե ղէն·
եբաց զյատակըս հողե ղէն·
'ի բնակութի մեզ համօ րէն:
Ըստեղծ ըզդըրախտըն բարձրա գոյն·
ծառս և ծաղկունս 'ի նմա ան հուն·
պէս պէս կերպիւ լուսափայ լուն·
զի բնակութի լիցի մար դոյն:
Ծաղկեաց զերկինս լուսաւո րօք·
արեգակամբ և աստե ղօք·
զերեսս երկրի ելից ծաղ կօք·
զի ցընծասցուք մեք հըրճուա նօք:
Ըստեղծ և զազգս այլ կենդա նեց·
զցեղս անասնոց չորքոտա նեաց·
սողնոց թըռչնոց և գազա նաց·
ազգըս հազար զանազա նեաց:
Ապա յետ այսորիկ խոր հի·
ստեղծանել մարդ ըստ պատկե րի·
տալով մարմին միտք և հո գի·
նըման երիցըն միա կի:

Նախ ՚ի հողոյ ըստեղծ զա դամ.
Երկրորդ եւ շունչ կենդանա կան.
Երրորդ հոգի եւ բանա կան.
Չորրորդ եւ կամք իշխանա կան:
Հինգ՝ զարդարեց ըստ պատկե րին.
Վեց՝ լուսափայլ մարմինք նո ցին.
Եօթն ազգ՝ ելից փրչմամբ շնորհին.
Ութ՝ եդ ՚ի դրախտն անմահ տեղին:
Ինն՝ արար գերագոյն վեր նոց.
տասն՝ եւ իշխել արարա ծոց.
Չորքոտանեաց սողնոց թռչ նոց.
Ձկանց ծովու եւ այլ զեռ նոց:
Պերճ տասն ազգ ծնունդ ա սի.
բնութենս մարդկան հողեղի նի.
յարարչութեցն ըսկըսա նի.
մինչեւ յաւարտն որ կատա րի:
Նախ ծնաւ զմեզ կամքն ածե ղէն.
Երկրորդ ծընաւ յոչէից զէն.
Երրորդ ծընաւ զտարերս հիւ լէն.
Չորրորդ ծընաւ մարդն ՚ի հո ղէն:
Հինգ ազգ՝ ծընաւ կենն ՚ի կո ղէն.
Վեց՝ նախ ադամ ծընաւ զկայ էն.



Եօթն

եօթն յըղղացաւ նա ՚ի մօ րէն.
ութ՝ զի ծընաւ նա մարդկօ րէն։
Ինըն՝ ծնանիմք յաւագա նէն.
որէ. ծընունդ աստուածե ղէն.
տասըն՝ ծնանիմք ՚ի տապա նէն.
՚ի յարութեանըն համօ րէն։
Սան էր յետոյ ըստեղծ զադամ.
՟Եւ ոչ յառաջ քան զամե նայն.
զի թէ պատկերէր և նը ման.
պարտէր առնել նախ ՟Է՟ ին քեան.
Թէ չէր ստեղծել զէակս նախ կին.
ուր բընակէր մարդն առա ջին.
զաշխարհս սեղան կազմեաց նը մին.
ապա կոչեաց պատուեաց զնախ նին։
Ապա հազար ազգ կենդա նին.
բերեալ կացոյց հանդէպ նը մին.
զի թէ հաւան լիցի նո ցին.
առցէ ընկեր յայնց իւր ան ձին.
Նա յանբանից ընկեր չառ նէր.
զի իւր նըման ոչ գըտա նէր.
բայց անասնոց անուն դը նէր.
որպէս նոցա իսկ վայե լէր։

Յորժամ անուն դընէր նո   ցին.
ը̃ իւրաքանչիւր պատշա   ճին.
գըլուխ 'ի վայր բերեալ նը   մին.
Հնազանդութե̃ անցանէ   ին։
Լկեալ և օձն իմ թըշնա   մին.
գալար տալով հին զէն չա   րին.
օձ անէ̂անեաց ըզնա նախ   նին.
զի նենգութե̃ էանց նը   մին։
Օ այն իմացեալ խորամա   կին.
'ի մէջ բազմաց զպարսաւն ան   ձին.
պահեալ ունէր զոխն 'ի սըր   տին.
սպասէր դիպող ժամանա   կին։
Մընաց ադամ ինքըն   միայն.
զի ոչ եգիտ իւրեան նը   ման.
զի նմ՛ պատկերէր տիրա   կան.
խընդրէր ընկեր իւր բանական։
Լսեն միմեանց լըսաքն երե քեան.
չէ լաւ մարդոյդ լինիլ   միայն.
արասցուք կոյսմ անապա   կան.
լինիլ դըմա միշտ օգնա   կան։
Յետ այնորիկ տէրն ադա   մայ.
արկ թըմրութի̃ նորին վե   րայ.

առեալ ըզ մի կողից նո րա·
նըմա օգնիչ ըստեղծ զեւա՛։
Եւա՛ չեղև նմա օգնա կան·
այլ լոյծ պատճառ եղև անկ ման·
դուստըր նո՛ր կոյսն ան նը ման·
ծընաւ զա՛ծ նմա օգնա կան։
Առեալ ածէ զնա՛ առ ա դամ·
զի սիրեսցէ հաւանա կան·
և նա՛ ծանեաւ հոգւոյն ա կամք·
ոսկըր յոսկերաց իւրն օգնա կան։
Սա՛ կոչի կին կըցորդ կե նաց·
անախտ լինէին լեալ ըստեղ ծած·
զանուն նորին կեանս անուան եաց·
զի էր ծնելոց զմայրըն կե նաց։
Ապա առեալ զնս՟ աստ ուած·
եդ ՚ի դըրախտըն հըրճուա նաց·
անդ պըսակեալ զնս՟ օրհ նեաց·
Լցնէք զերկիր աճմամբ բար եաց։

❊❊❊
❊❊
❊

*Գլուխ 2։

*Վասն գեղազարդութեան նախաստեղծիցն, և դրախտին փափկութեան։

*Տուն 18։

Էր փառք դըրախտին անպատմելի·
չըքնաղատես և սըխրա լի·
ծառքըն տային փայլ ըզ փայ լի·
արեգական պէս և լուս նի։
Դէմքն ադամայ փառօք ծաղկեալ·
և ոչ լոյս ճառագայ թեալ·
ցոլմունք լուսոյ անտի հո սեալ·
և քան ըզ հուր փայլատա կեալ։
Դէմքն ունէր փայլըս շանա շան·
որպէս ըզ լոյս արեգա կան·
բուրէր և հոտն անմահու թեան·
բերկրեալ ցընծայր ինքն ընդ ինքեան։
Անդամ ծաղիկէր նորա ծին·
լուսոյ բողբոջ գարնանայ ին·
փըթթել փառօք ՚ի մէջ դըրախտին·
ծափըս ծափի տայր ՚ի սըր տին։
Օ երդ հայելի պայծառ փայ լէր·



ած

ած նըման միշտ երե ւէր.
և ճառագայթ լուսոյն հո սէր.
զանձամբ նորին փայլատա կէր.
Մարմնով զերդ ամպն էր լուսընկալ.
և թափանցիկ լուսով ծած կեալ.
միտն և հոգին պայծառա ցեալ.
և ինքն ընդ փառս իւր հիա ցեալ.
Մ̃ ըզ կայծ մարմնով փայ լէր.
զի լոյս հոգւոյն յինքն վա ռէր.
և երկոքին լոյսըն խառ նէր.
պէս պէս նըշոյլ ցոլեալ հո սէր.
Աչօքն յած նայեալ հըրա ւէր.
զձայնն ականջօք լըսեալ զմայ լէր.
յանմահաւէտ հոտն որ բու րէր.
սիրտըն բերկրէր անձամբ թըմրէր.
Ի վեր յաստուած մըխիթա րէր.
Ի վայր դըրախտն ուրախ առ նէր.
յետ և յառաջ դիմեալ ճե մէր.
յաջ և յահեակ փառաւո րէր.
Ոտօքըն ճեմս առեալ պա րէր.
Ի մէջ ծաղկանցըն վառվա ռէր.
ձեռօքըն ծափըս հարկա նէր.

զի խնդութեցն ո՛չ հանդարտ ժէր.
Ծառքն և ծաղկունքն որ 'ի դրախտին.
զերդ արեգակըն փայլ լէին.
յանուշահոտ բուրմանց նո ցին.
որպէս թըմբրեալ լինէր նախ նին.
Մարմնոյն անմահէր անթառամ.
փառօք պայծառէր զանա զան.
սըրտին ցընծայր խրախճանա կան.
բերկրեալ 'ի փառս արքայա կան.
Ընդ լոյս սիրոյն ճառագայ թէր.
և խնդութեն փառքըն փայ լէր.
ուրախութին յորդահո սէր.
և հրճուանաց ձայնըն հըն չէր.
Ընդ կերպ լուսոյն էր զանա զան.
ցեղմ անեղին ցեղմ եղա կան.
այլ ազգ դրախտին այլ ազգ մըրգին.
ծառքն և ծաղկունքն այլանըման.
Ընդ հող դրախտին փայլ ըզփայլէր.
'ի ջրոյն ցոլմունք լուսոյ հո սէր.
օդն անմահից հոտըս բու րէր.
հուրըն վառեալ ճառագայ թէր.
Ընչքն 'ի գոյնս ծաղկանց հըրճուէր.



ական

ականջն ՚ի ձայն զ՚արթնոց զմ̄յլէր·
ռունկն ՚ի յանուշ հոտոյն թըմրէր·
բերանն ըզ քաղցրըն ճաշա կէր:
Նջ նըմա փառօք փայ լէր·
Նըշոյլ լուսոյն ճառագայ թէր·
վերնոց բանակըն ծանա լէր·
ծափըս հարեալ ադամ հրճ ուէր·
Զա̄ծ առ ինքըն տեսա նէր·
ինքն ՚ի յա̄ծ կերպարա նէր·
տիպն և պատկերըն վառվա ռէր·
յանեղական լուսոյն փայ լէր·

* Գլուխ · 3·

* Սան խաբէութեան բանսարկուին ՚ի յեւան օձին

* Տաղն 126:

Զայս ա̄մ տեսեալ չա րին·
հեղձմըղձուկ լինէր յանձին·
և մորմոքէր կըսկըծա գին·
պիղծ սադաէլ չարն առա ջին:
Իբրև ըզ հուր վառեալ նեո ցին·

բորբոքէր ըզ չարն 'ի հօ գին·
կայր խառնարեալ բոլորո վին·
և դիզանայր ծուխ նախան ձին·
Ողբայր սատանիկ հառաչա գին·
և մախանօք մաշէր զհօ գին·
հանգիստ չունէր ամենե ւին·
չար նախանձովն որ առ նախ նին:
Օ մաղձ դառնութե՟ իւրոյ անձին·
փրսխէր դասուցն անդընդայ յին·
սատանի՟ ցասնոյր չար բանա կին·
Հիբարկութի՟ շարժէր զնո սին·
Ժողովեցան 'ի միա սին·
չարատեսակ դասք խառնա րին·
առ սադաէլ չարն առա ջին·
տեսնուլ թէ զինչէ կամք նո րին:
Նաէ բերէք զարկածք չա րին·
առ հասարակ ամենե քին·
արկէք 'ի բով հրոյ հալո ցին·
տեսցուք թէ զինչ ծընանի ցին:
Ինքնէ հալոց չար երկա թին·
որ հըրդեհէ' զորս յինքն ան ցին·
որք կարծրանան [illegible]ով չա րին·

2 և չար

A 680

և չար տրտմման սիրտն հա լին.
Ներին նոքա զարկածք հա րին.
որ լինելոյն էր յապաւ նին.
արկին 'ի բով անշէջ հրա տին.
և չարութեամբ բորբոքե ցին.
Թէպէտ ասեն չարեմք բնա ծին.
իւրաքանչիւրքս առան ձին.
բայց զի դու գլուխ ես մեր դասին.
մեծ չար խորհիլ քեզ պատկա նին.
Դու ես նախնի չարն առա ջին.
մեք հետևողք կամաց քոյ ին.
դու խորտակեալ զմարդն առա ջին.
և մեք մի մի զծընունդ նո րին.
Դու ես նըստեալ յաթոռ հա րին.
կալ հակառակ արարո ղին.
այնպէս մեծ չար խորհեալ դո ցին.
որք մի զմիոյ հետ կատա րին.
Զի մեք որ քեզ հետևե ցաք.
յանճառ փառացն արտաքս ելաք.
սա հողածին լուսատե սակ.
երթայ յերկինս մեզ հակա ռակ.
Յայնժամ չկարեմք յաղթել դորին.



զի

զի դու բնակիս առ հըզօ րին.
այսէ մեր ժամ խաւարայ ին.
հընազանդեալս զկորուստ դո րին.
Մ՛եք ըզքեզ շատ բանբասեմ ցուք.
թէ ոչ խորհիս բան հակա ռակ.
շատ զօրք ունիս չարատե սակ.
մի քան ըզմի չար հնա ռակ.
Ս՛ոյնպէս մեծ չար խորհեալ դոցին.
որք յաւիտեան չազատես ցին.
զի վիշտք չարեաց հոգեղէ նին.
յիւր արարիչըն հասա նին.
Օ՛չ թէ փըրկէ նա ըզ դո սին.
վասըն սիրոյն իւր անքըն նին.
բաղումք ընդ մեզ բոցակիզ ցին.
որք մեզ նըման ոչ ճանազան դին.
Ս՛յսէր հընոցըն բանտարկ ային.
յոր զնիւթ չարեացըն վառե ցին.
հալեալ ծընաւ պատկեր չա րին.
որպէս և որթն յանապա տին.
Ս՛որդ յըղացեալ միտք բանտարկ ային.
չարիս ծնանէր անհընա րին.
ուրախ լերուք ասէ նո ցին.

 ճնա

հընարեցի զկորուստնո րին.
Մեք ա՟յ ծնազանդ չե ղաք.
վ՟ն այն յերկնից յերկիր ան կաք.
այս բանս լեցի և ձեզ գոր ծակ.
առնել զադամ քան զմեզ ա ռակ.
Սրմա՛ տրտմեալ լինէր պատ ճէր.
թէ ոչ պահէր նամ արտաքս էր.
ես ադամայ յաղթեմ ա սէր.
բայց դուք կացէք այլոցն տէր.
Բայց թէ յաղթեմք հողեղի նին.
այն նոր հընարնէ մեր չա րին.
այլ խորհեսցուք զանհընա րին.
մինչև 'ի մահ գալ անմա հին.
Եւ իսաթանըն սադայ էլ.
եկեալ 'ի յօձըն մըտա նէր.
զթոյնսըն կըրկին յերար խառ նէր.
և մահադեղ մարդոյն կաղ մէր.
Ո՛չ ի ո՟պ լինքն ունէր նա խանձ.
այսպէս և օձն էր մախա ցած.
չարըն զընկերըն իւր ձանա չեաց.
նովաւ եկեալ զադամ խա բեաց.
Պատճառ չարեացն էր տասըն բան

րով

որով կորեաք ամենե քեան·
վասն այն զօրէնս գրաւորա կան·
գրրեաց մատամբ տասըն բա նեան:
Նախ՝ բանսրկուն էր թըշնա մին·
երկրորդ՝ նախանձն որ ՚ի սըր տին·
երրորդ հընարն ազգի ազ գին·
որ շատ ունէր արկածք չա րին:
Չորս՝ օձն որ կայր ոխն ՚ի սըր տին·
Հինգ՝ չէր լեզուն առ սուտ բա նին·
վեց՝ անհանճար միտքն Եւա յին·
եօթն՝ որ խօսէր նա ընդ օ ձին:
Ութ՝ ծառ մահուն հրաժա րելի·
ինըն՝ պատուէրքըն հրամա նի·
տասըն՝ ցանկալ անհաս բա նի·
որ չէր յիւրում ժամանա կի:
Ո՜ այսոսիկ նիւթ առեալ չա րին·
զի պատրեաց դիւրաւ զնախ նին·
այսպէս և մեզ կան և հնա րին·
պէս պէս նիւթով կորուստ ան ձին:
Պարձէլ նոր չար խորհէր նո ցին·
նըրբատեսակ խաւարա յին·
մատուցակեալ զմահն առ նախ նին·

զոր և ծննդոցըն մատու ցին.
Նաև բերէք զանգակ դի նին.
զդառն և զմըռուր խաճարայ թին.
Թաս մատուսցուք նախատեղ ծին.
զի արբցէ մահ խուրյ ան ձին.
Ներքին զխաղողըն դառնա լի.
զողկոյզըն չար որպէս լե ղի.
արկին ՚ի հընձանս թունա լի.
զի բարկութեան բաժակ լի ցի.
Ողկոյզ նախանձներ չարու թե.
պըտուղ հընարներ զանա զան.
հընձան էր կամքն արեն հեղ ման.
գինին չար գործքըն ումորոր ճան.
Սըրտմըտութեամբ զայն կոխէ ին.
և բարկութեամբըն ճըմլէ ին.
՚ի վիշապաց գինի հա նին.
խառնել թունոք մահաբե րին.
Ո՜ սըրտմըտութին իժից չա րին.
զմըռուր մաղձից թունաւո րին.
զոր թէ ըմպէ ոք կամո վին.
ծանր է հընար բուժման նո րին.
Ա՜յ զայս պատեաց մոլոքս նախկին.



խա

խաղող նոցա դառն և լե ղին.
սրտմտութի և բարկու թիւն.
է վիշապաց գինի նո ցին.
Նա ժողովեալ ՚ի միա սին.
չարատեսակ դառք խաւա րին.
՚ի ծակատուակ պէս պէս կը ցին.
ջամբել նախնոյն պատրաստե ցին.
Պէս պէս որակ ունէր գի նին.
իւրաքանչիւրն ազդէր մին մին.
՚ի զանազան թասեր լը ցին.
և նախամօրն ըմպել տայ ին.
Թոյնն է մեղաց ունակու թի.
և պէս պէս ախորժակ սըր տին.
կամք մեռոյք մարմնաւո կին.
և առն հոգւոյն ըղ ձար գի նին.
Այն ըղ գինի յիմարու թեան.
որպէս ասէ երգըն դաւ թեան.
այն ըղ գինի մոլացու թեան.
որ ոչ յիշէ զանէաըն հրա մանն.
Այն քամակ տայ թըմրու թեան.
այն ըղ բարին ատելու թեան.
ամէն չարին հաւանու թեան.



ամըն

որըն փութալ 'ի վէտս ին քեան.
Որըն փառաց ինչ ցանկու թեն.
որն յագահիլ յամ բան.
որն 'ի ճնարըս գողու թեն.
որըն նենգել սիրոյ փո խան.
Որըն գինի խաբէու թեն.
որն ոչ զղջալ մինչ 'ի վախ ճան.
որըն պատճառ դընել յին քեան.
և որն առիթ այլոց գլը ման.
Որըն լըսել սուտ բարբանջ ման.
և որն ատել զուղիղըն բան.
որն 'ի բարի գործ ծուլու թեան.
և որն 'ի չարն արիու թեան.
Ոմանց ըղձ մեղս եօթնեց մահ ճան.
ոմանց զյանցանացըն զանա զան.
այլ և քան զայս այլ բազմա զան.
կայ յայն գինին զոր նոքա տան.
Օ այս չարութե գինիս ա ռին.
և մտաւորցին նախատեղ ծին.
զոր ճաշակեալ անտի նախ նին.
անցցոյց 'ի մեղ ամենե ռին.
Ոմանք զծլուխ գինույն ա ռին.



առ

սակաւ որբեալ փոքրկմա նին.
ոմանք 'ի մէջ գինւոյն հա սին.
յերկար մընան 'ի գործ չա րին.
Այլք զյատակին մըրուրն ա ռին.
որք մինչ 'ի մահ ոչ զղջա ցին.
զի թէպէտ մին է չար գի նին.
բայց յանօթսըն զանազա նին;
Մարդավանէ' դեւն առ հո գին.
գինեաւ լըցեալ թասն 'ի ձե ռին.
եւ կաղաչէ' թէ ճաշա կեն.
զմահ դառնութեան յաւիտե նին.
Այսպէս որդւոց նախաստեղ ծին.
զմահ դառնուն չար վիշա պին.
յիմարութեամբ առեալ զգի նին.
դեղեաց ինքեամբ զամենե սին.
Յետ այս չարեացս որ նիւթե ցին.
չար վիշապէն զիժից գի նին.
եմուտ 'ի յօձն իմ թըշնա մին.
եւ խաբանն այն անմար մին.
Որքան դեռ չէր չարն ընդ օ ձին.
նա թոյնք չունէր ամենե ւին.
մըտեալ էլից զթոյնսն 'ի նը մին.



զի

զի մահ արկցէ յամենե սին:
Եկեալ եկաց մերձ առ Ե ւա.
և ամենայն դևք ընդ նմա.
ասէ ուրախ լեր և բերկ րեա.
քեզ աւետիս և ադա մա:
Ո ձեզ ՚ի հողոյ ստեղծ ա՛ծ.
և եդ ՚ի դրախտըն հրճ՛ւա նաց.
բայց այլ մեծ փառք կայ ձեզ ծած կած.
զոր ձեր ստեղծօղն ձեզ ոչ յայտնեց.
Ուրա զի ես օձեմ իմաս տուն.
քան զա՛մ ստեղծ՛ած գի տուն.
ես ձեզ ճշմարտեմ եմ մօտա գոյն.
բայց ոչ անգէտ զերդ զանա սուն.
Այն զամենայն ծածուկս քըն նեմ:
և զխնդրելոցըն ճանա չեմ:
զգաղտնի խորհրդ թովչին գիտեմ:
նախ քան ըզգալն զանելին իմ խըր ցեմ:
Բայց ես նըշան տամ քեզ յայտ նի.
որ հաւատաս խօսուն ձայ նի.
ձեզ պատուիրան կայ հրամա նի.
չուտել զպըտուղն հրաժարե լի.
Եբաց այնու զվան եկայ ի.

որպէս գիտօղ ամենայ նի·
հնազանդ լինիլ օձին ձայ նի·
զի լըսիցէ զինչ որ խօ սի·
Դու իմ դըր չխայ ես անձին իշ խան·
ես քո ծառայ հնազանդա կան·
որքան հաանիս դու մեծու թե·
այն քան փառօք ես ճոխա նամ·
Ըստ անուանն կայ և գա զան·
և այլ ստեղծուածք յոյժ զանա զան·
բայց զայս նորա ոչ իմա ցան·
զոր այժմ ես քեզ ա ւետի սամ·
Բայց երբ հանես այնըմ փա ռաց·
հրաշափայլես իբրև զաստ ուած·
՚ի յանձնու կեանըս հըրճուա նաց·
յիշես թէ նա՛ զայս բարբա ռեաց·
Բայց նախ սիրով ինձ դա՛շն ա րա·
որ զայս չասես դու ադա մայ·
սիրով լըսես զինչ բան որ կայ·
հանց որ ադամ զայս չիմա նայ·
Օ ինա հրապարտէ բարկա նայ·
և անկատար բանիմ մը նայ·
բայց դու հնազանդես հաճա յոյ·


զի

զի դու լեցիս տէր ադա մայ·
Օ այս ասացեալ պահմիյա մեաց·
զի ցանկացի բաղձմամբ մը տաց·
Չարեօք ըղ միտօքն կախար դեաց·
մինչև էհան զինեն 'ի խե լաց·
Յետ այսորիկ ապա ձայ նեաց·
խրախուսանօք բանս հրճուա նից·
ասէ զականջ մտացըդ բաց·
ու զաւետիս մեծի փա ռաց·
Սանէր ստեղծօղն արարա ծոց·
նախանձ արար ձեզ և ու դուոց·
զի պատուիրանն եղև խըս րոց·
Թէ մի' ուտէք յամէն ծա ռոց·
Պատասխանեալ յիմարն ե ւա·
խօսօք օձին ընկեր դառ նայ·
անմիտ նախ հարց ընդ ադա մայ·
նա պատասխանի տացէ դը մա·
Ծառոց դրախտին որ այսըր կան·
մեզ ուտելոյ հրամանն տը ւան·
բայց 'ի ծառոյն չար գիտու թե.
ասաց չուտել զի մահ կու տան·
Խըրոխտալով չարն յայժ խըլն դաց·

 զպատ

զպատճառ բանին յորժամ գի տաց
զպատուէրն որ տըրն ձեզ հրամայեց·
զայն ասելով ըզ ձեզ խա բեաց·
Բայց ես նըշան տամ ձեզ բա րեց·
որ հաւատաս դու 'ի սըր տաց·
Թէ չէր ծառն այն պտղաւ բա րեց·
վնէր ըստեղծ ըզնա աստ ուած·
Այլ ոչ Թէ մահ կայր 'ի պըտ ղին·
կամ որք ուտեն զայն մեռա նին·
այլ կայր խորհըրդ անճառ 'ի նը մին·
վասն այն չեԹող մերձ կալ նը մին·
Զի տըր գիտէր զպըտուղըն զայն·
Թէ որք ուտեն ածա նան·
երբ դուք ուտէք աչք ձեր բա նան·
իբրև զած լինիք բնու Թէ·
Ահա ձեզ ձայն մեծ աւե տեաց·
որ 'ի յականջըս ձեր հըն չեաց·
զխորհըրդն անճառ զոր տըր ծածկեց·
ես յայտնեցի ձեզ սիրե լեաց·
Ցընծայր եւա փառաւոր լեալ·
զինչ նոր արև զինքեամբ ծա գեալ·
զի չարն փայլակն յերկնից ան կեալ·

շըրթունց ըղ միտքն այն խոնա րհալ։
Միտքն և հոգին այն անհան ճար։
խաղայր մարմնով զինչ գի ա հար։
Ճեմս առնելով պարէր յ՜ր կար։
վազէր ՚ի ծառն անասնա բար։
Զար ցանկութիւն որ ՚ինմա էր։
զբանս արարչին մոռացը նէր։
և որպէս խէթ նըմա վա րէր։
զնա ՚ի պըղծոյն արգել ա սէր։
Առէր զպըտուղն յիւրում ձե ռին։
դողայր մարմնով սասեալ հո գին։
զի գուշակէր բնութի նո րին։
զկորուստ անձին իւր դառնա գին։
Օ պըտուղն եդեալ մերձ բերանին։
և պահապանքն արգելու ին։
զի զատմունս շըրթամբք կըր կին։
կարգեաց ած փակ բերա նին։
Իսկ չար լեզուն որ բարբա ռէր։
՚ի ներս կուսէ զփականս բա նէր։
և մարգարէն վասն այն ա սէր։
դիր պահապան զերկիւղ քո տէր։
Նայեալ զբերանըն դըժնայ ին։

 ծա

Ծածեաց ընդ թոյնս լեզուի օ ձին.
զմաղձըն մահու որ 'ի պըտ ղին.
Նա կըլանէր բոլորո վին.
Յանկարծ լինէր 'ի հիաց ման.
Ետես զոր ոչ կըրծէր յին քեան.
խղեցին զլուսոյն ընդ պատմու ճան.
Լինէր խաւար գիշերա նման.
Այր մորմոքմամբ 'ի կըսկըծ ման.
աղաղակէր հառաչա ձայն.
սաստիկ գոչէր որպէս զան բան.
և ծիչ բառնայր մոլեգնա կան.
Զարտասուս իւր սաստիկ հո սէր.
լալով միշտ զանձըն հեղե ղէր.
սուգ ընդ գեցել զհերսըն փե տէր.
և արեամբ զանձըն շաղա խէր.
Ոպ մոլեալ ինչ կատա ղէր.
որ և ընդ միս բազկին ու տէր.
քունըն հատել հանգիստ չու նէր.
յաղաղակէն ոչ դադա րէր.
Ցերեկինս հայել աչքըն մըթ նէր.
դիմեալ զերկիր միշտ խաւա րէր.
յետ և յառաջ տարակու սէր.

յաջ և յահեակ միշտ երե — րէր։
Պուժք դառնուն մօրն եհայ ին.
ոչ եղեալ են ոչ այլ լի — նին։
զի ամենայն կըսկիծ չա — րին։
երևանայր յանձըն նո — րին։
Որքան յաշխարհըս մեռա — նին։
և որք 'ի հուրն անկեալ տան — ջին։
այնքան կըսկիծք որ̂ան նը — մին։
որ նախ եղև սկիզբըն չա — րին։
Եկն առ ադամ որպէս օ — տար։
մերկ խայտառակ անասնա — բար։
ադամ տեսեալ զնա զարմա — նայր։
Թէ զինչ եղև այդմիկ պատճառ։
Ասէ ցընա զի՞ լաս դու — կին։
և հառաչես ողորմա — գին։
այդ ինչ չարիք որ քեզ ե — կին։
ծուրէ լոյս քոյ պատմուճա — նին։
Կարծեմ թէ դու չես առա — ջին։
այն որ յինէն ստեղծաւ նախ — կին։
զի 'ի պատկեր քո դըժնայ — ին։
ցընորք չարեաց ինձ կերե — ւին։
Ո՛չ ի կողակիցն իմ ցանկա — լին։

լուսով ծածկեալէր 'ի մարմ մին.
դու դարշելի խաւարաց բին.
դէմ քո դըժնեայ ամենե հին:
Ո՜վ 'ի ստեղծուածս արարո ղին.
ոչ կայ նման քեզ չար դըժնայ բին.
մերկ խայտառակ և լալա գին:
ուստի՞ այդ ցանքըդ քեզ է կին:
Նախ թէ զխն չարըն խա բեաց.
պըղտղով ծառոյն զոր տըրն յայտնեց.
առի ձեռօքս իմ չորա ցած.
և մերկացայ յանձառ փա ռաց:
Բայց դու թէ սէր ունիս ըն դիս.
փութով լըսես քո կողակ ցիս.
առ կեր և դու զնա՛ իբրև զիս.
զի մընայցեմ քեզ 'ի դրախ տիս:
Թէ կայ քո սէրն ընդ իս նախ կին.
այսօր ցուցցի 'ի քոյդ ան ձին.
վասըն սիրոյ քո արար չին.
յիշեա՛ և զմեր սէրն առա ջին:
Բայց թէ չըլսես ամենե հին.
այժմ որ ունիմ ցանս 'ի յան ձին.
ստուտէր քո սէրն այն առա ջին.

զի ո՛չ հոգաս վասն իմ դար ձին·
Թէ անամոթն էր պատա հեալ·
դեռ մեզ պիտէր զնա հո գալ·
տես քո մարմին այսպէս խո ցեալ·
դու կաս այդպէս անհոգա ցեալ·
Թէ փուշ մըտնէ մարդոյ յո տին·
աչքն արտասուեն վասն այն մա սին·
ես կըսկըծեալ փըշով չա րին·
դու ո՛չ դըներ զըսպեղա նին·
Թէ օտար մի լինէր մե ռեալ·
դեռ պիտէր մեզ և ըզնա՛ լալ·
ես որ ցամաքսեմ մահա ցեալ·
արժան չառնես դու զիս ող բալ·
Նա որ եղէ հանց փորձու թեամբ·
մեռեալ՚ի հող դառնամ ան ձամբ·
հոգիս տանջի անանց մահ ուամբ·
Թող դու մընաս այդ խընդու թեամբ·
Պատասխանեալ ադամ նը մին·
խանդաղատեալ՚ի սէր նո րին·
տարակուսեալ մորմոքե լին·
ո՛չ գիտելով ըզ դեղ ցա ւին·
Ո՛ի՛ մեղադրեր դու ինձ ո՛վ կին·



ես

ես նոյն սիրովն եմ առա ջին.
բայց թէ ուտեմ զպըտուղ ծառ ին.
և ես ընդ քեզ պատուհաս իմ։
Թէ ոք անկցի 'ի խոր ծո վին.
ո՛վ հետամուտ լինի նը մին.
թէ ոք երթայ ընդ հետ նո րին.
նա կորընչին 'ի միա սին.
Այլ թէ արբեցէ ոք մահա դեղ.
զայլ աղաչէ զնոյն ճաշա կել.
այսպէս և քո բանդէ տը դեղ.
զի այդ պըտուղդէ մահա դեղ.
Ո՜ ինչ արասցուք ցաւոց քո յին։
մոլորելոյդ ընդ բանսարկ ո՛ւին.
քեզ բըժըշկիլ չէ հընա րին.
զի նենգեցեր դու անհա սին.
Ուրախացաւ կինն 'ի հո գին.
զի եւ սիրով զպատասխա նին.
հընար եգիտ թըշուառ գե րին.
խաբել նովաւ զմարդն առա ջին։
Պատասխանի տըւ եալ նո րին.
զի պատրեսցէ բանիւ զնախ նին.



այս

այսպէս պատճառ դընէր բա    նին.
զի ամենայն միտք հաւա    նին։
Պատիժ չարեաց պատուհա    սին.
զոր խոստացաւ տէրն յանցո    ղին.
Ես նախ ասեցի պատուիրա    նին.
պատուհանէր այս զինչ և    կին.
Նա նենգեցի օձըն բա    նին.
յիս դիպաւ նեա պատուհա    սին.
զոր ինչ պատիժ կայր յանցո    ղին.
գալոց չարն այսէր զինչ և    կին.
Մի էր պատուէրքըն հրամա    նին.
և մի պատիժ յանցաւո    րին.
Ես որ մարտեայ ընդ հրամա    նին.
յիս դիպաւ նեա պատուհա    սին.
Չես հակառակ դու արար    չին.
որպէս և ես մեղայ նախ    կին.
Թէ դու սիրով ուտես վասն    իմ։
իմ յանցանաց մեղքըն ջըն    ջին.
Օ խս վասըն քոյ յօրինեաց    տէր.
զի ընդ քեզ ունի մեծ անճառ    սէր.
Թէ դու ուտես զմեղուքս չի    չէր.
և վասըն քոյ զիս չարտաք    սեր.

Ոչ է որք անկցին 'ի ծով խո   րին.
յայլ լողորդաց նոքա փըր   կին.
գայ մըկըրտի 'ի ջուր վասն   իմ.
որ զիս փըրկելըն կամե   ցին.
Ո՞ւ թէ ուտէ որք դեղ մա   հու.
դարձեալ գեղթափ տան ուտե   լու.
ես որ կերայ զպըտուղ մա   հու.
դարձեալ փըրկիմ 'ի յուտե   լու:
Թէ դու զփըրկելըն իմ կու կա   միս.
սիրով ականջ դընես բա   նիս.
առ ճաշակեա՛ և դու ըն   դիս.
զի մըտայցեմ քեզ 'ի գըրախ   տիս:
Իսկ թէ հանէ՛ նա զիս   միայն.
քեզ ծիլ լիցի այլ օգնա   կան.
ահա՛ ես կամ 'ի կըրկըծ   ման.
և արտասուեմ հառաչա   ձայն.
Խարբալեցաւ միայն ադա   մայ.
յորժամ խաբեալ եւես զե   հա.
կամէր լինել բանից նո   րա.
զի ունէր միտ սէր ընդ նը   մա.
Տարակուսեալ լինէր յան   ձին.
կնոջըն լսել թէ արար   չին.

   խել

խելքըն ընդ աչաւըն գընա ցին·
եթող զա͞ծ և ոչ ըղ կին։
Ո՛նմահ բանին լըսել չկա րագ·
զի չէր անեղ որպէս զաստ ուած·
այլ զի յետոյ էր արա րած·
զնըրմանակցին ձայնըն սի րեաց։
Սնոյջ միտքըն չար էր քան զօ ձին·
զի իմացաւ բան նորա ծին·
օձըն խաբեաց զտըրգ կէտըն կին·
իսկ նա զնախնի մարդն առա ջին։
Սինըն կերաւ յաւտով բա նին·
իբրև զա͞ծ լինիլ յան ձին·
իսկ այսպէս յոյս չըկայր մար դին·
այլ խայտառակ եռեա ըղ կնին։
Խորհուրդ չարար մ͞րդն եղկե լին·
Թէ ես պահեմ զբան հրամա նին·
և աղաչեմ վասըն սո րին·
յայնժամ կընոջ մեղքըն թող ցին։
Բանզի էր կէս մարմնոյն մե ռեալ·
կիսոյն ապրիլ ոչ էր հը նար·
վասն այն կերաւ անասնա բար·
զի գլուխն ոտիցն էր հնազանդեալ·


Ա՛ա

Մաքեալ և նմա՛ զկայծըն հը րոյն·
զպըղտուղ մահու քորքոջքե լոյն·
եդ ՚ի բերանն քաղձմամբ յու սոյն·
վասն եհայր ազատե լոյն:
Իսկ Թոյնք մահուն որ ՚ի պըղտ ղին·
այլայլեցին զբնութի նո րին·
մերկացա՛ն զլոյս պատմուճա նին·
եղև խա՛ւար աղջամըղ ջին·
Յա՛ ճիչ քարձեալ հառաչա գին·
աղաղակէր գոչմամբ սըր տին·
գետք արտասուացն իջանէ ին·
կըսկըծանօքըն ցաւա գին:
Սաստիկ ողբայր ողորմա գին·
Թախծմամբ սըրգոյ մեռեալ հո գին:
ողբս յօրինէր բախմամբ սըր տին·
վայ և եղուկ տալով ան ձին:



Գլուխ

## *Գլուխ 4

### *Վասն ողբոց և հառաչանաց նախաստեղծիցն։

### *Տաղ ԺԲ.

Վայ այն աւուրն որ ես ստեղծայ
վայ այն ժամուն յոր խաբեցայ
հոգիս վառէլ խորհուրդս է ռայ.
զի մեծ չարիս վաստակե ցայ։
Վայ որ զպտուղն առէլ կե րայ.
վայ որ պատճառ եղի զե ւայ.
զնա մատնելով չարդարա ցայ.
այլ յոյս աչացն ե լայ։
Վայ այն պահուն յոր ես Թաքեայ.
վայ Թզենւոյն յոր ծածկե ցայ.
վայ որ չասի տեառըն մե ղայ.
այլ ըզ պատճառն հանի 'ի նա։
Վայ որ յանճառ կենացն ե լայ.
վայ որ դրախտէն արտաքսե ցայ.
վայ որ յայս չար երկիրս ան կայ.
վայ և եղուկ ազգիս վե րայ։

Վայ որ մեղօք ես լըղա ցայ·
վա՛յ որ ցաւօք որդիս ծը նայ·
վայ որ ինձ մահն առաջի կայ·
վայ որ դըժոխքն ինձ կու մը նայ:
Վայ որ հոգիս յինէն գը նայ·
վա՛յ որ մարմինս 'ի հող դառ նայ·
վայ որ բնութ՟ ոչընչա ցայ·
վայ որ ոչինչ համարե ցայ:
Երկրի փոշի հոսեալ եղ ծայ·
հոտեալ նեխեալ շարաւ դար ձայ·
մարմինս որդամբք լըցեալ է ռայ·
'ի չորս տարերս ցընդեալ գը նայ:
Չէր և ոչ եղիցի սա՛·
ոչ երբեմնի տեղի սո րա՛·
հողմըն մահու շընչէ 'ի սմա·
և ընդ ինքեան առեալ գը նայ:
Հոգին միայն առանձնա նայ·
և ինքն առ ինքըն հիա նայ·
Որպէս էի կամ զինչ է ղայ·
կամ զինչ լինիցիմ առ յա պայ:
Վայ որ խընդան դևքն յիմ վ՟ր·
վա՛յ որ գերեն զհոգիս նո քա՛·

 վայ

Վայ իմ ծննդոցս որ բազմա  նայ.
Վայ թէ քանի չար կայ նո  ցա։
Վայ որ 'ի հուրն անշէջ ան  կայ.
Վայ որ որդանցըն կեր ե  ղայ.
'ի գեհեններն հոգիս ող  բայ.
Վայ որ խաւարն ոչ լուսա  նայ,
Վայ որ մաշին հոգիքն 'ի  նմա.
Վայ որ տանջանքն ոչ վերջա  նայ.
Վայ իմ ազգին որ անդ մը  նայ.
Վայ և եղուկ ինձ և նո  ցա։

*Գլուխ 5.

*Վասն աւուր հոգեւորին, եւ պատուէ
բազմ դիւացն.

*Տուն 26.

Վայ իմ աւուր հոգեվա  րին.
Վայ որ զհոգիս առնել տանին
Վայ ապշութեան ճանապար  հին.
Վայ որ չգիտեմ թէ ուր տա  նին,
Վայ չար դիւացն որ ինձ կայտնին.
Վայ որ ընդ իս պատերազ  մին.

 վայ

վայ որ զմեղաց նամակն ու- նին.
վայ որ մի մի յայտնեն զնո սին:
Վայ որ յաւնեն վըկայք հա րին.
վայ որ բոցցին բերանք նո ցին.
այո այո աչք մեր տե սին.
զործկածք գործոց մերոց 'ի դմին:
Վայ ե̃ թուղ տալըն հրեշտա կին.
վայ որ խաղան զինեւ նո քին.
վայ որ տանջել զանձն իմ կըռ վին.
եւ'ի վերայ իմ կատա ղին:
Վայ որ պէսպէս գունդքըն չարին
ահեղ դիմօք ինձ երե ւին.
ըստ զանազան չար խորհըր դին.
զոր ինձ գործել ետուն նո քին:
Պէս պէս դիմք կերպարա նին.
չարատեսակքըն դըժնայ ին.
մըռմըռալով միշտ կատա ղին.
եւ պատառել ջանան զհո գին:
Ըստ զօրութեց հոգւոյ տա սին.
տասըն կերպին պատերազ մին.
զի ըստ արժանւոյն առցէ հո գին.
զառ հաւատչեայ դատաստա նին:


Դէմ

Պոէմքն այլակերպք ևահա գին.
զարհուրական կերպարա նին.
հուր ցոլանայ յուրնկանց նո ցին.
և պաշարեն զգերեալ հո գին:
Դասք դասք երամք չար բանսկին.
խառնիխուռն անդըր ժողո վին.
գունդ գունդ բերեն զարկծք չարին
դատապարտանաց պատերազ մին:
Զայնի՜ գոչեն յոյժ սաստկա գին.
որպէս ճայթմունք յորոտս ամ պին.
և՚ի ճըչել ոգւոց նո ցին.
սարսեալ հոգիս ըն նըրա զին.
Օ՜ անազան դէմք նոցա յայտ նին.
որպէս առ մեզ այժմ անձա նին.
դեւք սատանայք քաջք և ա լին.
յորոց ահէ հոգիքն հա լին:
Հոտք դարշուն յոյժ զազրա գին.
որ՚ի դժխոց դասէն բու րին.
զհամ աղծրութեըն տաղտկա լին.
առեալ հոգիքըն մաշես ցին:
Շուրջանակի պահեն զհո գին.
ըստ վեց շարժմանցն որովք յանցին.

՚ի վեր ՚ի վայր յաջ ւահե   կին.
յետ և յառաջ մրրցեալ հրո   վին:
Ծածուկ ւայտնի պատերազ   մին.
ըստ կըրկնակի զգայարա   նին.
ըստ խորհըրդոց մըտաց սըր   տին.
և ըստ յայտնի գործոց ձա   րին.
՚Ի խաւարեալ օդոց մի   ջին.
խաւարային դիմօք յայտ   նին.
Հոգին ապշեալ միտքըն ցըր   դին.
միջաբեկեալ յուսահա   տին:
Ա՜ զօղանջեն գուշմամբ նո   քին.
այ՛ այ՛ աչք մեր տե   սին.
զարկածք չարեաց մերոց ՚ի   դմին.
ի՛սկըզբանէ մինչ ՚ի վեր   ջին:
Յափըշտակել ջանան զհո   գին.
որպէս զմարմինըն մախե   սին.
և ընդ ասելըն հրեշտա   կին.
ձեզ սաստեսցէ տ՜ր և ցըր   ւին:
Յահագնակերպ դիմաց նո   ցին.
որպէս հալեալ լինի հո   գին.
և նըւաղեալ ՚ի մէջ մար   տին.
միջաբեկեալ սըրտաթա   փին:

Ապա՛ հանեալ զնա հրեշտա կին.
մերձ առ բանակին կայա նին.
և ցուցանէ յայտնի նը մին.
զվըճիռ գործոյ դատաստա նին:
Նա՛ տեսանէ զկայանս վե րին.
ուր ամբարեալ հոգիքն պա հին.
դաս դաս կարգել ըստ պա՞տշա ճին.
ըստ զանազան գործոց նո ցին:
Դռաւք պոռնըկաց յայլոց ջո կին.
և ըսպանօղք որիշ լե նին.
զըրկօղաց դասքըն առան ձին.
չարքն յիր՚րաց ջոկեալ դա սին:
Նա՛ տեսանէ գնացեալ հո գին.
զայն հրապարակ կըսկըծա գին.
և շուրջ պատեալ դաս դաս նո քին.
զնա կոծեսցեն ողորմա գին.
Սորուս կըցորդ եղել նը մին.
լան ընդ նոսա հառաչա գին.
և մորմոքեալ փոշիմա նին.
մինչև ՚ի յօր դատաստա նին.
Վա՜յ իմ յետինըն գիշե րին.
ուր ծածուկ գեշքն իմ յայտնես ցին.


վայ

վայ երբ գոչէ փողըն վեր ջին·
հրատարկէ՛ զչարս իմ ան ձին։
Երկինք հերկիր ընդ նոյն ձայնին·
հաւաքեսցին 'ի միա սին·
և զիս յառաջ քարշեալ բեմ բին·
աչք ամենայն ընդ իս հայ ցին։
Ասեն այս այրն է մահա ծին·
որ միշտ սիրեաց զկորուստ ան ձին·
այժմ ամաչէ 'ի յատե նին·
'ի հարցանել դատաւո րին։

*Կ[illegible] 6։ *

*Մ[illegible] [illegible] [illegible]· Լ[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։

*Տ[illegible] 35։ *

Յորժամ դըրրունք երկնից բանին·
լինի հընչումն ահագնա գին·
դասք հրեղինաց 'ի վայր հո սին·
մինչ զի թափուր մնայ եր կին։
Յայնժամ լինի բարբառ փո ղոյ·
նըման ամպոց որոտ ման ղոյ·



կո

կոչէ զմարմինս 'ի չորս նիւ- թոյ.
կալ առաջի Տեառն աստու- ծոյ.
Յայնժամ մեռեալք ամենե քեան.
յառնեն և գան 'ի դատաս տան.
ոմանք զինչ լոյս արեգա կան.
ոմանք խաւար դիւաց նը ման.
Չորեք կերպեան աթոռ դը նին.
յորմէ տեսողքըն սարսա փին.
ած՟ն յիսուս բազմի 'ի նմին.
Հարցաքննէ զամենե սին.
Հարցնէ բանիւն երկիւղա լիր.
յորմէ դողան երկինք և եր կիր.
ընկեր վասն է՞ր այրըր մը տեր.
երբ հարսանեաց հանդերձ չունէիր.
Յայնժամ բերանքըն պապան ձին.
զի պատասխան տալոյ չու նին.
այլ որպէս մոմ 'ի մէջ հը րին.
յաստուածային ահէն հա լին.
Ոտս և ըզ ձեռս նոցին կա պէ.
ապա սըրով ընդ մէջ կըտ րէ.
յանհաւատից կարգըն դա սէ.
որ զտարտարոսըն ժառան գէ.

Ոմանց տայ ձայնն աւհա գին.
երթայք 'ի մութն աղջամըղ ջին.
անդ լըլ աչաց ձեզ եղի ցին.
և ատամունք ձեր կըրճը տին.
Ոմանց լապտերքըն շիջա նին.
որք այժմ ունին զգործ խաւա րին.
շատ մուրանան և ոչ շա հին.
այլ գըլխիկոր լեալ պատկա ռին.
Ո հաւատացեալս ամենե սեան.
կոյս անուանէ տեառըն հրա ման.
կէսք պըսակաց արժանա նան.
և կէսս խաւար ոմ ցու ցան.
Ո ի կուսութիւն երեք ա սին.
առ հասարակ ամենե քին.
ոմն 'ի հաւատ ոմն 'ի մար մին.
և որք յօտարս ոչ գըռնա ցին.
Ոմանքն են կոյս ոչ հաւա տով.
բայց խաւարեալ են չար գոր ծով.
ոմանք անբիծք են ոչ մար մնով.
բայց աղտեղեալ են խորհըր դով.
Կոյս են ոմանք ոչ օրի նօք.
որք չանկանին այլ անկող նօք.

ճայց սե՜անան պէս պէս գոր ծօք·
չվաւեն զլսպտերս լուսոյ նիւթովք:
Նա՜ զայս մեկնէ պօղոս յայտ նի·
կոյս կոչէ զհա՜ատս քրիստո սի·
որպէս ըզ կոյս մի փե սայի·
ես խօսեցայ զձեզ յիսու սի·
Բայց իւրաքանչիւր կուսա նաց·
տասն պատրաստի եւղ լապտե րաց·
զի 'ի յա՜ուր մը հարսա նեաց·
'ի յառագաստ մըտցեն փա ռաց·
Ոմանց առեալ զքանքարըն մին·
որք ըզ բարիս ոչ յարդե ցին·
ասէ թէ տուք շահեցո ղին·
այն որ արար զհինգըն կըր կին:
Արդարութեան կըշիռք դը նին·
զոր ինչ գործեաց անդ կըշը ռին·
որ կողմն յաղթէ անդըր դա սին·
եթէ բարւոյն եթէ չա րին:
'Ի զըրկողաց ինչքըն խընդ րին·
ընդ միոյն չորս ըստ զաքէ ին·
առնուն զբարի գործ թէ ու նին·
կամ տան 'ինա զմեղք զըրկա ծին:

 Ոմա

Ոմանք ելեալ զդուռըն բա խեն.
որ որ բաց մեզ աղաղա կեն.
ասէ գընացէք զձեզ ոչ գի տեմ.
և ոչ բընաւ՛ իսկ ճանա չեմ.
Ոմանց ասէ ձայնն ահա գին.
որք 'ի յաղքատս ոչ գըթա ցին.
քաղց. և ծարաւ՛ մերկ 'ի բան տին.
զիս ոչ տեսիք ամենե ւին։
Հինգ ազգ մարդիկ անդ երե ւին.
որք ասա գործով զանազա նին.
երկուքըն չար գործով պատ ժին.
երեքն արդարք պըսակե ցին։
Ոմանք զուտ չարք կէսք միջակ ին.
ոմանք բարիք ամենե ւին.
ոմանց չար գործքնէ շատ բա ժին.
կէսք գործք բարեաց շատքան զչարին
Արքա 'ի չորս կողմըն դա սին.
արդարադատ դատաւո րին.
երկուքըն միան յատակ ստո րին.
երեքըն ընդ տեառըն վերաս ցին.
Զուտ չարքըն յետուստկըն լալա գին
և զուտ բարիքըն դէմ երե սին.

 ուր

ուր մեղքն է շատ ձախմն՝ դա սին.
լաւ՛ շատքն յաջմէ ընդ միջա կին:
Ը՞նդ դատաստան առնէ ար դար.
նըրբատեսակ և անա չառ.
զգործոց բանից զոր խօսե ցար.
և զոր մըտօք խորհեալ յան ցար.
Համարս տացեն դատարկ բա նին.
ըստ խորհրդոց զանազա նին.
թէկ ըստ գործոցն որով յան ցին.
պէս պէս պտժօք անձամբ տու ժին.
Որք աստ 'ի հինգ զգայարա նին.
մխուրդքանչխուրսըն մեղու ցին:
տացէ ըզ դարձ փոխարի նին.
պէս պէս պատիժ նոցա կըր կին.
Անկըն զանէծք ևզձայն գու ժին.
փչօքըն լան 'ի խաւա րին.
պաքի բերանն 'ի ծարա ւին.
և ատամուքըն կափկա փին:
Ոընկմըն ըզ հոտ դառըն ծը փին
և զաղծրութի դիւաց գըն դին.
բոլոր մարմնոյն հուրնէ բա ժին.
և դառնաշունչ սառնամա նին:


Յայն

Յայնժամ ջոկէ՛ նա յիրե րաց·
զմաքուր օդիսն 'ի սև այ ծեաց·
դասէ՛ զօդիս յաջմէ փա ռաց·
զայծիս ձախմէ նախատա նաց·
Տանջանարանքըն պատրաս տին·
ըստ զանազան գործոց չա րին·
չկարէ՛ քըննել միտք մարդկայ ին·
զոր լինելոց է անդ նո ցին։
'Ի վեց կողմանց պաշարես ցին·
ըստ վեց շարժմանց մերոյ ան ձին·
տարակուսեալ 'ի նոյն մի ջին·
կըսկըծալի անձամբ հա լին։
'Ի վերուստ տըրն ահագնա գին·
ներքուստ դըժոխք բացեալ լի նին·
'Ի ձախմէ դասք դի՟աց գըն դին·
յաջմէ հրեշ՟տկք ցասմամբ կնդ՟նին։
Յետուստ հրեղէն գետն ահա գին·
և տարտարոսքն 'ի յառա ջին·
գոչէ՛ դըժոխքն ահեղա գին·
ձայնի՟ հալէ՛ զամենե սին։
Ահա՛ մեծ օր և խա՟ա րին·
ահա չար ժամ և դառնա գին·


ահա՛

ահա՛ կըսկիծ և լաց ուժ գին.
որ պատահի մեղաւո րին.

*Գլուխ 7։
*Ս՟ս զանազան տանջանացն դժոխոց։
*Տաղ 23։

Յետ քըննութ դատաստա նին.
երբ ամենայն բանք վըճարին.
այն է չար ժամ և խաւա րին.
որ յոյս բարեացըն հատա նին։
Յորժամ երթայք յինէն ասէ.
զնոցա զամեն յոյս հատա նէ.
ամպ խաւարին զնո ծած կէ.
և ամենայն չար պատա հէ.
Յանկարծակի երկիր շար ժի.
սանդարամետըն պատա ռի.
անդունդըն ահեղ բացեալ լը նի.
յոյժ զանազան չարեօք ՚ի լի.
Բացցի վիրապն այն ահա գին.
մերձ ՚ի տարբերս հրեղէն ծո վին.
յոյժ հեռագոյն ամենե ւին.
՚ի խընամոցն աստուածայ ին։

Ո՜ որ պատրաստեալէ անմարմ նոց·
չարատեսակ այսոց պըղ ծոց·
տացէ ընդ նոյն չարաց մարմ նոց·
հետեւողաց նոցին գոր ծոց·
Այլ անձառ են փառք սըր բոց·
և զանազան պըսակք գոր ծոց·
նոյնպէս պատիժք չարեցն ո գւոց·
անպատմելիք են ըստ գոր ծոց·
Ո՜ որ ինչ պատիւ տայ արդա րոց·
զդիմակ նոցին մեղուցե լոց·
քանզի կըշիռ դընի գոր ծոց·
կըշռողապէս երկուց կող մոց·
Որքան արդարքըն բարձրա նան·
նոյնքան չարիքն ՚ի ստոր եր թան·
այսպէս և կիրք համանգա մայն·
դիմակ միմեանց լիցի նո ցայն:
Չկարէ գիտել միտք մարդկայ ին·
զոր լինելոց է անդ նո ցին·
բայց ըստ կարծեաց իմոց մը թին·
փոքր ինչ ասեմ վասըն նո ցին:
Չորս ազդ տանջինքեն գըլխո վին·
ըստ չորս հիւթոց ինձ պատճա տին·



իսկ

Իսկ ըստ գործոց զանազա նին.
պէս պէս ըլլանք կան 'ի նո րին.
Պոէմ երեսաց հուր դեհե նին.
Եւ 'ի յետուստ սառնամա նին.
անքուն որդունքն յաջմէ դա սին.
Ձախմէ խաւարն աղջամըղ ջին:
Պորձիլ չորս ազդ տանջանք լի նին.
որ չէ եղեալ ամենե հին.
Բայց այս նոցա է առան ձին.
որք հակառակ են արար չին:
Նախ՝ 'ի կենաց յուսահա տին.
երկրորդ՝ յանշէջ հուրն անկա նին.
Երրորդ՝ մարմինքն ոչ մեռա նին.
չորրորդ՝ տանջանքն ոչ խափա նին:
'Ի հրոյ բերանքըն պապա կին.
ցրտով ատամքըն կափկա փին.
ծըծեն որդունք զմարմինս նո ցին.
վէրք ատամանցըն խորո վին:
Աչքըն լան կըսկըծա գին.
ռընկմէն առնուն զհոտ գարշ տըղմին
գոչեն բերանքն ողորմա գին.
բոլոր մարմինքըն մորմո գին:


Աւն

Ունկըն լըսէ ըղձայն գու   ժին.
լեզուն պասկի 'ի ծարա   ւին.
ոսկըրն ընթանան 'ի գեհե   նին.
ձեռքն և մատունքըն տոչո   րին:
Վերուստ ցասումն անծայ   ին.
որ բորբոքէ՛ զամենե   սին.
և՛ ինքնըրքուստ հուր գեհե   նին:
որ յեռ. անծէ զանձինս նո   ցին:
Ով ծըծումբ մարմինք նո   ցին.
փութանակի հըրով լուց   ցին.
որպէս հալոց 'ի մէջ հնո   ցին.
վառեալ մ ըմմովըն տապա   կին:
'Ի կայծակաց վերայ շըր   ջին.
զի այնէ միշտ տեղի նո   ցին.
և՛ ի հըրոյ մէջ թաւա   լին.
և անհանգիստ միշտ երե   բին:
Լինին ճայթմունք 'ի մէջ հնո   ցին.
և որոտումն ահագնա   գին.
ամպէ՛ խաւարն աղջամըղ   ջին.
զկայծակն անձրև անծէ նո   ցին.
Այն պատառի մըռմըռ   գին.
հոսէ՛ ըղհուքն 'ի մէջ հնո   ցին.



և

և հուրն անշէջ ամենե ւին.
միշտ բորբոքի 'ի գեհե նին։
Ընդ ատամունքըն կափկա փին.
և լալ աչացն ոչ խափա նին։
այլ բարկութիքըն բորբո քին.
յանպատմելի տարտարո սին։
Ընդ լան հոգիքն 'ի հըրնո ցին.
հանգիստ չունին ամենե ւին.
որպէս ձըկունք 'ի մէջ ծո վին.
ըղան 'ի հուրն յաւիտե նին։

*Գլուխ 8։

*Մ̃ան չարէն թէ ուստի եղև․ կամ զինչէ պատճառ նորին։

*Տունք 64։

Ո՛վ հիացումն անպատմե լի.
և տարակոյս անքըննե լի.
ստեղծեալ էաք բնու̃թ բա րի.
չար խարբալեալ ապակա նի։
Արդ քըննեսցուք թէ զինչէ չար.
և կամ ուստի նորին պատ ճառ.



որ

որ հրեշտակացն էած խա ւար·
և մեր բնութեան մահ կըրկնա բար·
Ոնէ անգոյ և անկա տար·
ոչէ ստեղծուած մեզ հաւա սար·
ըստ ինքն ոչ ինչ անունըն չար·
առնէ վընաս հըզօրա փար·
Ո ինձ զհրեշտակս յերկնից էհան·
և մահացոյց նովաւ զա դամ·
զաստուած ՚ի խաչ էած մահ ուան·
և է պատճառ հանուրց յանց ման·
Ի հիացումըն զիս պա տեալ·
կամ զարմացմամբ տարակու սեալ·
թէ չարն զոր չէ ած ստեղ ծեալ·
ուստի՞ եղև նա գոյա ցեալ·
Ո ունի տեսակ յայլ ինչ սե ւէ·
և ոչ անհատ ՚ի տեսա կէ·
գոյացութին բընաւ նա չէ·
այլ պատահումն ՚ի յոչըն չէ·
Յորժամ ստեղծան էակք նա չէր·
և ոչ անունն ևս երե ւէր·
առանց ստեղծման ուստի՞ լի նէր·
զի ստեղծանօղ նըրմա ոչ էր·

 Ո.Ր

Այլ պատահումն է յետ գոյ ին.
որպէս էակս յետ արար չին.
յրժմ ստեղծան հրեշտակք նախկին.
պատահեցաւ չարն 'ի նո սին.
Գոյացութիւն կամ պատա հումն.
ոչ լինիցին առանց նո րուն.
մաղմի սպիտակ կամ սեաւ գոյն.
առէ չլինի թարց իմ յայլ գոյն:
Պատահմունքն ինն են սեռա կան.
որք յարարչէն ստեղծեալ ե· գան.
և մինն է իր գոյացա կան.
ինն 'ի նըրմա միշտ բաղկա նան:
Բայց պատահմունք առանց գոյ ին.
ոչ բաղկանան ամենե ւին.
որակ քանակ ւայլն ըստ կար գին.
որպէս յայտնի է գիտո ղին:
Ընդ գոյակէ մինն աստ ւած.
ստեղծ զինըն դասըս հրեշտա կաց.
քանակ որակ գոյ հրեղի նաց.
ւայլ ինչ սահմանէ պատա հած:
Որպէս առանց գոյացու թէ.
այլ պատահմունքն ոչ բաղկա նան.

զայս տ̃րն յայտնեաց յաւետա րանն·
թէ առանց իմ իրք չգոյա նան·
Բայց արդ ուստի՞ եղև այս չար·
յորժամ նա չէր այսըմ պատ ճառ·
զի նա բարի բնութե̃ ան ճառ·
կամի՛ մեզ փառս իւր հաւա սար·
Թէ պատահումն ոք զչարն աս է·
որպէս համայն ոք վըկայ է́·
զտ̃րն հակառակ իւրըն բե րէ՛·
որպէս բնականըն վըկայ է՛·
Օ ի պատահման սահմանն այս է·
իմաստասէրըն օրինադ րէ·
զի ոչ գոլոյն 'ի գոյ ա ծէ·
ոչ բառնիլոյն ապակա նէ·
Չարըն գոլովըն ներգոր ծէ·
մինչև զաստուած 'ի խաչ բե րէ·
բառնայ խաչեալն ըզնա յերկ րէ·
և զգործ չարին ապակա նէ՛·
Ի յաէ պատահմանըն սահ ման·
զոր ամենայն միտք իմա նան·
իսկ չարըն 'ի յայսըմ պայ ման·
չունի զսահմանըն պատահ ման·

Իր զանազան 'ի ֆա    սին.
կատարեցաւ 'ի մին մա    սին.
այս է սահման բնութեն նո    րին.
որպէս ցուցաք յենթակայ    ին.
Պարտէ գիտել զէնութին ի    րին.
Հապա քըննել վասըն նո    րին.
անէ անգոյ իրք թէ լի    նին.
ոչ սահմանի բնութի նո    ցին.
Ուրեմն յայտնի է յայսցա    նէ.
թէ պատահումն և գոյակ    չէ.
սա յամենայն իմացմա    նէ՛.
մերկ և օտար 'ի բնութե    նէ.
Այս մեզ անհասէ գիտե    լոյ.
թէ չարն ուստի է իր ան    գոյ.
միտք մեր որպէս կաթ մի ծո    վոյ.
առ անհասին բաղդատե    լոյ.
Զի քաղցր և դառն 'ի միա    սին.
ոչ եղիցին ամենե    ւին.
գործ տըրտմական և սէր չա    բին.
'ի մեղանչելըն կատա    րին.
Բայց ըստ կարծեցելայ մարդկայ    ին.
տարակուսեալ մտօք ստո    րին.



փոքր

փոքր ինչ քըննեմք վասըն նո  րին·
թէ զինչէ լոկ չորն ըստ ի  րին·
Ոչէ ստեղծեալ ա՟ծ ըզ  նա՛·
այլ 'ի գործելըն գոյա  նայ·
որպէս ըզ հետ իրէք վե  րայ·
որ յընթանալն երեւ՟ա  նայ·
Սա՛ մըտածմամբ էակ  ցայն·
անէ անգոյ եւ անսահ  ման·
'ի գործ ածելըն գոյա  նայ·
եւ յոչ գործելըն անգոյ մը  նայ·
Որպէսեւ է մաճն 'ի սուսե  րին·
առանց հատման ոչ կասա  րին·
այլ կայ ծածկեալ 'ի մէջ նո  րին·
որպէս անգոյ ամենե  ւ՟ին:
Նա՛ որպէս հուր լուսապայ  ծառ·
վառէ՛ ըզնիւթն իւր հա՟մա  սար·
այսպէս ներհակ սորինըն  չար·
ում հանդիպի առնէ խա  ւ՟ար·
'Ի հրեշտակաց դասուն սկը  սեալ·
իւրն ենթակայ զնոսին կազ  մեալ·
նոքօք զըազումըս մոլո  րեալ·
գունդ գ՟նդս առնէ հէնք եւ հեծել



Նա

ՙՆա հրեշտակացըն դև դարձընող։
որ և զադամ դարձոյց 'ի հող։
սուտ և ոչ ինչ և այլայ լող։
բաղումս տանէ իւր հետև ւող։
Չարնէր պատրող վերին դա սին.
որ իւր նըման արար զնո սին.
որ և նըստաւ յաթոռ նո . րին.
կոչիլ անուամբ հրեշտակ չա րին.
Ասէր եդից զաթոռն իմ յամպս.
որ է միջնորդ արեգա կանս.
այսինքն 'ի չար գործս և յան ցանս.
Նըստեալ հանգչի լեւիա թանս.
Այն քան ծառայ մըտեալ չա րին.
մինչ զի եղև գըլուխ նո րին.
և զտուտն ածեալ իւրոյ դա սին.
քարշել ընդ իւր զմասն երկնայ ին.
Այ 'ի ցընդիլ նոցին յեր կիր.
անկան զմարդոյն հազարք և բիւր.
որև խառնեալ զնա ընդ իւր.
արար ինքեան գեհեան և հուր.
Օ, արն իմացումնէր լոկ միայն.
և ոչ ուրեք ունէր նը շան.

այժմ յայտնեցաւ դէմյանդի ման·
դեք և մարդիկ իւրն ախոյ եան։
Բայց այժմ ասեմք ըզնա յա տուկ·
Թէ զինչէ չարն որէ ծա ծուկ·
Նա հանուրցէ գարշ և տաղ տուկ·
բայց փափդմամբ ծըրծեն յգուրդ·
Որպէս բնութե բարին միշտ է·
և յոչէից ՚ի գոյ ած է·
դիմակ նորին չարն ոչինչ է·
ում հանդիպի ոչընչացն է։
Պակասութի բարւոյն է չար·
որպէս անլոյս տեղին խա ւար·
կամ նո՛ր իմացք անմըտա բար·
որպէս արար նախ բէլն ար։
Տեառըն կամաց գոլ հակա ռակ·
է չարութի բաղմադի մակ·
և կամ բնութե գործոց ներ հակ·
կամ խոտորիչ յաջ և յա հեակ։
Մ՛իայն վասն իւր կամիլ զբա րին·
է չարութիւն անհընա րին·
որպէս արար մարդն առա ջին·
յափըշտակել զփառս արար չին։

Ե՜ւ այս չարեացըն վեհա գին.
որք ջատագով լինին չա րին.
ովըն ծընաւ՜ զչարըն առա ջին.
և այլք օգնեն գործոց նո րին.
Չարէ և սուտն ով որ խօ սի.
զի նմա՛է սկիզըն ամէն չա րի.
և ովոք սուտ բան բարբա ռի.
ընդ բանսարկուին դասեալ լի նի.
Չար է այն իրն յոյժ յատկա կան.
յորմէ փախչին ամենե քեան.
և է՛ բարի ընդ հանրա կան.
որում բազումք սիրով բաղ ձան:
Եօթըն մահու չափ մեղքն է չար.
իւրեանց մասամբքըն հաւա սար.
զի ամենայն չար հանրա բար.
կայ 'ի նոսա մինչ 'ի վըր ձար.
Ե՜ւ կամ անհաս իրաց բաղ ձալ.
է՛ չարութի՛ անմըտա բար.
որպէս արար նախ բե լար.
և մարդն ադամ նմին հաւա սար.
Կամ 'ի բարի գործոյն դառ նալ.
կամ 'ի դըժ՜արըն ծուլա նալ.



կամ

կամ ՚ի հեշտ գործսըն դուրա նալ.
այսոքիկ չար են համար եալ.
Կամ զոր ինչ կամքն ուզէ առ նէ.
զմիտս և զօրէնս ոչ հարցա նէ.
բարի կարծեօք չար կու գոր ծէ.
որպէս եւա խաբեալն յօ ձէ.
Ջան անպատեհ որ քեզ չէ յար.
յորժամ առնես լինի այն չար.
զոր գործեցին անմըտա բար.
նախնին ադամ և բե լեար:
Կամ ոչ առնել ըղ կամըս տ՟ն.
վասըն թողլոյն անձանի չար.
որպէս զօրէնս զոր ընկա լար.
յորժամ չառնես ասեն չա րար:
Կամ որ ՚ի հաւատս կոչե ցար.
և սուրբ գործոց յարակցե ցար.
յայնժամ լինի անուն քո ծար.
թէ չյարակցիս բարեացն անճառ:
Կամ գործ բարի որ նախ քո կայր.
թողեալ զայն կաս անհոգա բար.
թէ և չունիս այլ մեղք յեր կար.
այն բաւականէ լինել չար:
Կամ

Կամ թէ բարի ուսեալ յոյժ մէ.
զայն ծըրարեալ թաքուցա նէ.
տ՟ր տոկոսեօք զայն պահան ջէ.
և ծառայ չար ըզ նա՛ կո չէ.
Կամ որ զհաւատն անօթ պա հէ.
և զիւղ գործոյն ոչ պատրաս տէ.
դաւանելով տ՟ր տ՟ր կո չէ՛.
բայց յառագաստն ոչ մըտա նէ.
Կամ թէպէտ զայլս ոչ զըրկե ցին.
և չար անգամ ոչ գործե ցին.
բայց աղքատաց ինչ ոչ տը ւին.
ընդ չարագործսըն դատակ ցին.
Կամ ոխս ունիս չար նախան ձու.
ապասես աւուր զմաղձըտ հեղ լոյ.
յայնժամ ծընօղ ես դու մա հու.
ամէն չարեաց գեր 'ի վե րոյ.
Կամ չարս ասի նոցա յար մար.
որք դատակցին ընդ բե լիար.
հուրն և տանջանքն է նշ՟ չար.
և չարչարանքն է անվը ճար.
Կամ որ ս՟բ գրոց ոչ հաւա տայ.
այլ յերեսացէ քրիստո նեայ.



սա

սատանայ լա՛ւ է քան ըզ նայ.
զի սարսելով կու հաւա տայ.
Կամ թէ իցէ դք քահա նայ.
ան՞ոք՝ յաստուած նա մերձե . նայ.
ընդ տիրասպանսըն կարդի նայ.
որ քան զայս այլ մեծ չար չը կայ.
Կամ որ գիտէ զօրէնս ըլ ման.
և ոչ պահէ զոր ՚ի նմա կան.
սաստիկ առցէ անձամբն ըզ դան.
քան զայնոսիկ որք չ հաւա տան:
Չարէ և նա որ միշտ գըր կէ.
՚ի պատճառէ՝ զինչ և ի ցէ.
ասա որ զայլոց արիւնն ու տէ.
անդ միոյն չորս հատուցա նէ:
Չարէ որ զմահն ՚ի միտ չա ծէ.
զդատաստանի օրն ոչ յի շէ.
՚ի դըժոխոց ահէն չ վա խէ.
նա զամենայն չար կատա րէ՛:
Կամ որ առնու զազդմունք չնորհգ.
զոր միշտ ծագէ առնա ա՟ծ.
թէ յայնմանէ կենայ ՚ի բաց.
չարէ և նա նըման դի ՟ւաց:


Կամ

Սամ որ յայտնի կայ 'ի չա րին·
և գայթակղէ զամենե սին·
նա այլ չարեացն է վեհա գին·
վայ և եղուկ տայ ո՛ր նը մին:
Թէպէտ ճ̃ղումք են գործք չարին·
որք մասըն մասըն կատա րին·
բայց յայսքան բանս բովանդակին·
որպէս ցուցաք նախ և կըր կին:

*Գլուխ 9:

*Սան ցանկանալոյ բարւոյն ան
ձայն էից:

*Տուն 16:

Ենութիւնք հանուրց եղակա նին·
յափըշտակել ջանան զբա րին:
զի ցանկութիւնս այս անդըր տին·
'ի ստեղծմանէ' կայր 'ի նո սին:
Ուրաքանչիւրքն ըստ չափ ան ձին·
բաղձան հասնիլ բարեաց մա սին·
աչք ամենայն 'ի քեզ հայ ին·
զի տաս նոցա ըզպիտա նին:

Հրեշտակք և մարդք վ՞ն այն յանցին.
զի ցանկացան յոյժ անհա սին.
յոչ հասանիլ բարեաց հան րին.
և զմասնաւ՛որըն կորու սին։
Յանկալ պարտէ առնել զբա րին.
այլ զի անկարեն ոչ տա նին.
են որք ցանկան գործոց չա րին.
քանզի բարի թըւի նո ցին։
Այլ և բնութ՟է սիրեն զբա րին.
բարի կարծեն զչարն որք սխա լին.
իսկ թէ յայտնին գործըք չա րին.
յոյժ հրաժարին ամենե ՛ւին։
Յայս հանելով զպատճառ չա րին.
յինքեանց զբարին խոստովա նին.
որով յայտնին փառք նախա տպին.
գոլ բարութիւն յամենե սին։
Այլ որ մասամբ ունի զբա րին.
չկարէ տանիլ նա ընդ հան րին.
այլ մասըն մասըն թէ լի նին.
յայնժամ տիրէ մարդ բոլո րին։
Բոլոր բարին ընդ հանրա կան։
անեղ բնութենն է սեպհա կան.


զփա

զվառս անեղծին համանգա մայն.
չկարէ տանել ոք եղա կան:
Նոյնպէս և հայրըն մեր ա դամ.
որ էր պատկեր տեառն և նը մոն.
բայց զի հողոյ էր նիւթա կան.
չկարաց պահել զտեառըն հրաման:
Նաև զի ունէր մարմին զգա լի.
և զգայարանք երևե լի.
հըրճուա՛ զպատուէրն իմանա լի.
այլ զձայն օձին իւրն ազգակ ցի:
Նա՛ զի հոգիէր բանա կան.
իւր արարչին տիպ և նը ման.
ոչ ընդ դի՛ւացն իսպառ կոր եան.
այլ փըրկութեան հանդիպե ցան:
Նա՛ զի բարի փառաց ցան կաց.
և՛ի յայլմէ եղև խա բած.
վասն այն ա͞ծ ըզնա՛ փըրկ եաց.
և առ հատոյց իւր ցանկա նաց.
Օ ի ցանկացած իւր նախա տպին.
առնուլ ըզ փառս կերպարա նին.
վասն այն ելից զփափագ նո րին.
աստուած քրիստոս որդի կու սին:


Նակ

Իսկ դեւն օտար ամենե ւին։
զի չէր պատկեր իւր ստեղծո ղին·
վասն այն չէառ զոր կայր 'ի մտին·
զի ինքնէր սկիզբ իւրոյ չա րին։
Ոչ թէ յայլմէ եղեւ խա բած·
այլ իւրովի զչարըն սի րեաց·
այլ եւ անզեղջէ 'ի մե ղաց·
վասն այն ա̃ծ զնա ոչ փըրկ եաց·
Որպէս որք 'ի մեղաց գըղ ջան·
այնք թողութե̃ արժանա նան,
իսկ որք սառեալ անզեղջ մը նան·
տանջին նոքա 'ի յաւ իտ եան,

---

*Գլուխ ԻԸ։

*Ս̃ պատկերակցութե̃ մարդոյն առ ա̃ծ, եւ ունելոյ զնմանութե̃ անմարմնոյն։

*Տուն 35։

Մարդըս պատկերէ արար չին·
տիպ եւ նըման յոյժ հրշագ ին·
այլ եւ նըման հրաբուն դա սին·
ըստ յատկութեցն որ 'ի նո տին։

Չորեքնիւթեայ բնութ՟ մար մին․
եռամասնեայ հոգին ՚ի նմին․
չորս կերպ ատու է անե ղին․
հանգիստ կամաց երրեակ ան ձին։
Ածղըն հողոյն յար ըստ գոր ծին․
ջուրն աւխծուն գոչմամբ ուժգին
հողմն արծըւի սըրաթըռ չին․
հուրըն մարդոյն լուսակեր պին։
Ըստ հողոյն դէմք ՚նփնոյն ծաղկել․
և ըստ ջրոյն լոյս թափան ցել․
հողմով հոգւոյն շնորհօք լը ցել․
հըրոյն յատուած կերպարա նել։
Պարձեալ մարմին միտք և հո գին․
հաւատ և յոյս սէրն ՚ի նո սին․
այլ շունչ և բան և ձայնն ՚ի նը մին․
երեք երեք ՚ի միա սին։
Հոգին անմահ և լուսա ւոր․
և անձն իշխան ղերդ թագա ւոր․
միտքն և ծընունդ իւր բանա ւոր․
շունչըն բըղխումն իւր միա ւոր։
Այլ և հոգին եռամաս նեայ․
ունի մարմին քառանիւ թեայ․


մար

| | |
|---|---|
| մարմինս աթոռ հոգին ար | քայ. |
| տիպ անեղին բաղմեալ՝ի | նմա։ |
| Այլ և մարմին մեր ըղձգա | լի. |
| սա եռակի տար որո | շի. |
| և ժամանակ երեք ու | նի. |
| անցեալ ներկայ և ապառ | նի։ |
| Այլ միտքն՝ի հայրն օրինա | կի. |
| բանն՝ի նմանէ ծնեալ որ | դի. |
| հոգիս հոգւոյն անձանակ | ցի. |
| և՝ի միմեանց ոչ բաժա | նի։ |
| Այլ և հոգին քառակեր | պեան. |
| ստառաքինի մասանցն որ | կան. |
| հոգեղինացըն կերպա | րան. |
| առ որս հանգչի անմահ ար | քայն։ |
| Խոհեմութիւն՝ի տիպ մար | դին. |
| արիութիւնն է առիւ | ծին. |
| ողջախոհ հաւս այս՝ արծը | ւին. |
| արդարութիւնն յատուկ՝ ե | զին։ |
| Ընդ ինըն դասքեն հրեշտա | կին. |
| երից երրեակ ըստ արար | չին. |
| չորքն արտաքսեալ դեւք անձա | նին. |
| այլ ճըշմարիտքըն մընա | ցին։ |


Առա

Նախամանեայ գոլով հո գին.
Երիցս երրեակ որպէս նո քին.
Ըստ ինըն դասուց հրեշտա կին.
Ինն յատկութիւնք կան 'ի հո գին.
Խոհեմութիւն բանակա նին.
արիութիւն ցասնուլ չա րին.
ողջախոհիլ ցանկակա նին.
և կրկնակի կողմունք սո ցին.
Խորամանկին ընդ տըգի տին.
յանդըգնութին ընդ երկչո տին.
Ժըլատութիւնն ընդ շըռայ լին.
մարդիկ ոգւօք 'ի չար շար ժին.
Որքա ինունքս կան 'ի հո գին.
ըստ հրեշտակաց ինինեակ դա սին.
ոմանք են չորք ըստ բանաւոր ֊ին.
ոմանք բարիք նըմանք նո ցին.
Հրեշտակք բոլոր բարիք ստեղծան.
յետոյ կամօք դևք չարա ցան.
այսպէս ինունքս որ 'ի մեղ կան.
պատճառ բարւոյ ստեղծել և դան.
Խորամանկեն ընդ բանաւոր ֊ին.
տըգիտանալն 'ի գործ չա րին.



յան

յանդըգնիլ դէմ հոգեմար տին․
երկչոտ լինիլ՝ի փաս ան ձին․
Շռայլ բաշխել հրքա՛ո րին․
Ժլատ լինիլ յանկարգ տե ղին․
սոյնպէս պահեալ զմասունք սոցին․
նմանիմք վերնոցն իննեակ դա սին․
Այս ինըն դասք են հրեշտա կաց․
մին դաս սրբոց երկրա՛ո րաց․
այս տասըն դասք փառաբան չաց․
առ որս հանգչի անճառն ա՟ծ․
Կան տասըն դասք և 'ի հո գին․
ըստ զօրութեց հոգւոյ մա սին․
ըստ անմարմնոց և անե ղին․
տասն յատկութիք կան 'ի հո գին․
Նախ հասարակ ըղգայու թի․
երկրորդ երևակայու թի․
միտքըն հոգւոյն տեսողու թի․
կարծիքն և տրամախոհու թի․
Կամքըն բարեաց ընտրողու թի․
յօժարութիւն և բարկու թի․
աստ՟ածայնոյըն ցանկու թի․
տասըն հոգւոյս այս զօրու թի․

 Որ

Որպէս քնարա՛ւըն տասն ա ղի.
սաղմոս երգէր հոգւին դաւ՛ թի.
տասըն լարովս որ 'ի հո գի.
